

ի Յայս: 19 Ապա թե ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի, գիտասջիր՝ զի որ աւր հասանէ յերկիրն Յայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ, եւ զնոյն պատերազմ Նորոգէ ընդ քեզ, զնոյն ճակատս եւ զնոյն թշնամութիւն յուզէ:

20 Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ի քաւղէիցն, տաճիկ ուղտուք արծակէ ի Յայս արս զհողոյ եւ զջրոյ, զի եկեսցեն բերցեն¹ Նմա զհմայսն²: 21 Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ յղեացն: 22 Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ՝ զկես յատակին իւրոյ խորանին հարկանել ի բերեալ հողոյն Յայոց, եւ զջուրն ցանել ի վերայ Նորա, եւ զկեսն ի Նոյն հողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ: 23 Եւ ետ ածել զԱրշակ արքայ Յայոց զառաջէս իւրով, եւ զայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացուցանել. եւ զձեռանէ առեալ՝ շրջէր ճեմելով:

24 Եւ երթեւելս առեալ ընդ խորանն, ասէ ցնա, յորժամ ի պարսիկ ի հողոյն ի վերայ ճեմեին թե՛ Ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Յայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, եւ կամեցայ տայ քեզ զդուստր իմ ի կնութիւն, եւ որդի ինձ առնել զքեզ, իսկ դու խստացար ընդ իս, եւ քովք կամաւք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի. եւ այս լի երեսուն ամ է՝ զի պատերազմեցար ընդ իս:

25 Ասէ Արշակ արքայ, թե՛ Մեղայ քեզ եւ յանցեայ. զի ես եկի եւ կոտորեցի, եւ յաղթեցի թշնամեաց քոց. եւ ակն ունեի ի քէն պարգեւ կենաց, եւ թշնամիք իմ հրապուրեցին զիս, եւ արկին երկիւղուկս ի քէն, եւ փախուցին ի քէն: 26 Եւ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ ածին զիս. եւ եկի աւասիկ առաջի քո: 27 Եւ աւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ. զինչ եւ պետք է քեզ, արա զիս, զինչ եւ կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ:

28 Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ Նորա, շրջէր ճեմելով, ի չքմեղս առեալ զնա ածեր ի հայակողմն ի հողն հարեալ յատակն: 29 Իսկ իբրեւ յայն տեղի հասանէր, եւ զհայ զհողն կոխեր, մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝ այլ ձայն շրջէր³. սկսանէր խաւսել եւ ասել. Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից զքեզ եւ որդւոց քոց զվրեժ Նախնեաց իմոց, եւ զմահն Արտեւանայ արքային: 30 Չի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ⁴:

1 Յօր. բարձցեն

2 Օրինակ մի՝ գհամայն

3 Օրինակ մի՝ փողէր

4 Յերկուս օրինակս՝ եկիցէ